

Թերթը կը զրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Սրտասահման
Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տղ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

2. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 25 ՇԱԲԱԹ 1902

ԹԻԻ 251

2 Ե 4 Ո Յ Ց

Կարգ մը բաժանորդներ ներկայ 251րդ թուով այս տարուան Բ. վեցամսէին կը սկսին. ուստի կը խնդրենք անոնցմէ որ ըստ պայմանի բարեհաճին բաժանագինները զրկել կանխիկ: Անցեալ վեցամսեայէն պարտք ունեցող կարգ մը զիւղերու բաժանորդներէ ալ կը խնդրենք որ այլ ևս փութան վճարել. առ այս իրենց դիւրութիւն մը տալու համար պատրաստ ենք դրամի փոխարէն Պուլկարական նամակադրոշմ ալ ընդունելու:

ՆԱՄԱԿ Ի ՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դաւրէժ 1 | 14 Մայիս 1902

Պ. Խմբագիր,

Ազգօգուտ «Հայելի»-իդ 247րդ թուով հրատարակուած «Գիտական Բաժնական Ակադեմիա» վերնագրով յօդուածը որ աւթուականութիւնը կը ծաղրէր ու կը ձաղկէր, տեղւոյս հակալքողական շրջանակին բաւական ուրախութիւն պատճառեց. Հաճեցէք յոյն թիւէն 3 օրինակ ևս զրկել մեզ:

Ցանկալի է որ արտասահմանի բոլոր թերթերն ալ մերթ ընդ մերթ աւթուականութիւնը

հարուածող յօդուածներ հրատարակեն, (*) ըզգուշացնելու համար մերայինքը այդ մարմնակործան ճիւղէն:

Ընդունեցէք Պ. Խմբագիր, մեր յարգանաց հաւաստին:

Մնամք բարեացակամ,
Հակալքողական
Մ. Կ. Յ.

(*) Մենք հոս խմբագիր մը ունինք, որ 2եր աւտարկած լոյն յօդուածին առթիւ մեզի գէժ զինուէջաւ. . . սագի փետուրներով, առ ի պաշտպանութիւն բժին ծայրն անգամ չի տեսնելու աստիճան կոնքող ալբոյի ճաշի մը:

ԱԶԳԱՅԻՆ

Պարսից գահաժառանգ իշխանը որ Դաւրէժ կը բնակի, 125 ֆր. նուիրեր է քաշալերելու համար Հայերու կազմած «Հակալքողական ընկերութիւն»ը որուն նախագահն է Տիար Տօքթ. Կ. Փաշայեան:

—Դաւրէժի ազգայինք 2200 օսմ. ոսկիի փոխարէն մեծ շէնք մը գնենք են, Ատրպատականի հայոց կեդրոնական վարժարանը հոն հաստատելու համար: Այդ շէնքը Ղալայի և Լիլաւայի երկու մեծ թաղերու ճիշդ կեդրոնն է: Դաւրէժի Հայերը շնորհաւորութեան արժանի են իրենց այդ յաջողութեան համար:

— Ինչ-եորք գտնուող Բալուցի Հայերը Պատ-
րիարքարան գրելով յանձն առեր են տարեկան
20 անգլ. ոսկի նպաստ զրկել իրենց ծննդավայ-
րի վարժարաններուն :

Ի ՆՊԱՍՏ ՈՐԲԵՐՈՒ

Հայ Գեղարուեստական երեկոյքը

Բարիզ 31 Մայիս 1902

Հինգշաբթի երեկոյ տեղի ունեցաւ «Հայ գեղար-
ուեստական երեկոյթը» :

Հակառակ տեղացած սաստիկ անձրևին, հանդիսա-
կաններու թիւը 400—450 հոգիի հասեր է : Երեկոյ-
թը սկսեր է ֆրանսացիի մը՝ Պր. Գաբրիէլ Մուրէի մէկ
բանախօսութեամբը, այդ բանախօսութեան խորագիրն է
եղեր «Հայ բանաստեղծութիւնը և գեղարուեստը» :
Բանախօսութեան ժամանակ մագական լապտերով ցոյց
տրուած են Հայկական ճարտարապետութիւնը ներկայա-
ցնող զանազան նկարներ և տեսարաններ : Բանախօսու-
թենէն յետոյ տեղի ունեցեր է իսկական երեկոյթ — կոն-
ցերտը, որուն մասնակցած են տիկին Սըկոն—Վէպէր և
տիկին Տէլվէր՝ ֆրանսական թատրոնէն, օր. Փալադա-
րա՝ ազատ երգչուհի, իսկ արական սեռի արգիսցներէն՝
Պր. Պ. Ֆիլիք Կարնիէ՝ ֆրանսական թատրոնէն, Սամօ՝
Օտէնէն, Ամիրեան՝ հայ երգիչ, Կէկուա Կիւլպէնկ՝
հայ գերասան : Աւերջին մասին մէջ երգուած են հայե-
րէն ժողովրդական երգեր, արտասանուած են հայերէն
հին և նոր բանաստեղծութիւններ, որոց շատերուն ֆը-
րանսէրէն թարգմանութիւնն ալ կարդացուեր է :

Երեկոյթը դրուած էր ֆրանսական ակադեմիայի տն-
դամ Պր. Էրնէստ Լավիսի և Բարիզի երեսփոխաններէն
հայասէր Պր. Տընի Գօշէնի հովանաւորութեան տակ :

Կը կարծուի թէ երեկոյթին հասոյթը քահանայիցի
ԸԼԼՄ՝ ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹ-ԲԷԿ

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ուրախութեամբ կարձանագրենք հոս տարիներէ ի
վեր յղացուած ու բաղձացուած եւ փայտալուծած ծը-
րագրի մը գործադրութիւնը՝ Գիտենք ապահովապէս թէ
միայն մեզի չէ, որ սաստիկ ուրախութիւն կը պատճառէ
«Վիեննայի Հայկական Անի» ընկերութեան կազմակեր-
պութիւնը, այլ նաեւ այն ամէն Հայուն որ ազգասիրու-
թիւնն ըսուած սուրբ կրակէն կայծ մ'իւր կրծոցը տակ
անթեղուած կը պահէ : Կառավարութիւնէն վաւերացուած

Ընկերութեան ծրագիրը, կտմ կանոնադրութեան ձե-
ռագիրը՝ որ տողերս գրողը թղթատելու հաճոյքն ունե-
ցաւ, քիչ ժամանակէն հայ թարգմանութեամբ լոյս պի-
տի տեսնէ, հրապարակման առթիւ թերեւս աւելի ըն-
դարձակ խօսինք : Ընկերութեան առաջին նիստը տեղի
ունեցաւ Ապրիլ 18ին, բայց ոչինչ բանի մը համար՝ ժո-
ղովականներէն ոմանք հեռացեր են ընկերութենէն, —
յամենայն դէպս բալձալի է միութիւնը — որով վճա-
կան նրստը կատարուեցաւ 24ին, աւր գլխաւոր գործող
անդամներն ընտրուեր են : Ընկերութեան նպատակն է .
1. Անդամներուն ընկերական կենաց դարգացումը : 2.
Աղբատ եւ արժանաւոր հայ ուսանողաց՝ ընկերութեան
միջոցներուն ներածին չափ օգնել : Ունենալ որոշ տեղ
մը, ուր կարենան ժողովուիլ երբեմն երբեմն և խօսիլ ի-
րենց մայրենի լեզուաւ — հայերէն, որուն՝ երկար ա-
տեն չ'աօսելով՝ կարօտեր են : Գաւախտութիւններ ընել,
սորվեցնել այն Հայերուն իրենց մայրենի լեզուն, որ
գժբախտ պարագայից խրմամբ չ'են կրցած սորվիլ : Ըն-
կերութեան յառաջիմութեան վրայօք արդէն օրէ օր
շատ նպաստաւոր տեղեկութիւններ մեզի կը հաղորդուին :
Այժմէն իսկ հեռաւոր ազգայիններէն զատ շատերն
անգամ գրուիլ կը խնդրեն, նաեւ օտարազգիք ալ . . .
Ուրեմն կը մաղթենք մենք ի սրտէս մի սիրտ, մի հո-
գիք գործողներուն, յաջողութիւն և յարատեւու-
թիւն, յառաջագիմութիւն եւ համերաշխութիւն :

Հ. Ամստեայ

ԺԱՄԱՆՑԻ ԲԱԺԻՆԸ

ՆԱԽԱՄԱՅԻՆ

— Հը՛շ, հը՛շ, մի արթնցնէք զանիկա, ըսաւ Աս-
տուած շրջապատող հրեշտակներուն :

Եւ հրեշտակները ոտքի մատներնուն վրայ քալե-
ցին, թեւերնին ծալած և մատերնին ալ բերաննուն
վրայ դրած :

— Գաբրիէլ, ըսաւ Ուրիէլ, ինչո՞ւ գործողութիւն
կատարենք բնացող Ադամին վրայ, աւելի աղէկ չըլլա՞ր
արթուն եղած ժամանակը ընել :

— Կատա՞կ կընես, պատասխանեց Գաբրիէլ, եթէ
արթուն ըլլար պիտի չհաճէր :

Ու շարունակ մատներնուն վրայ քալելով Ադամին
մօտեցան : Նախամարդը կրնակին վրայ պաւկած կը
բնանար :

— Տղաքս, ըսաւ Աստուած մեղմիւ, օգնեցէք ին-
ծի որ զայն իր կողին վրայ պառկեցնեմ :

Եւ Ադամ իր ձախ կողին վրայ դարձուեցաւ :

— Գաբրիէլ, բռնէ ոտքերէն որ չշարժի, եւ դուն,
Ռաֆայէլ, տուր ինծի դանակ :

Ռաֆայել Հանեց դանակը, սրեց քարի մը վրայ և յանձնեց զայն Աշխարհներու Տիրոջը, որ Ադամին միտք կտրեց:

Ադամ արթնցաւ, երկնցաւ և յօրանջեց երկարօրէն: Դրախտին բոլոր կենդանիները, զորս ինք անուանակոչած էր, իրեն ծանօթ էին, բայց հիմայ կը տեսնէր նոր արարած մը որուն նմանը երբէք չէր տեսած առաջ: Իրեն կը նմանէր շատ մը կերպերով, սակայն նշանաւոր տարբերութիւններ ալ ունէր, Ադամին դիմացը լուռ կը կայնէր նէ, և կը ժպտէր տաքօրինակապէս գրաւիչ կերպով մը:

—Ո՞վ ես դուն, հարուց Ադամ:

—Քու կինդ եմ, պատասխանեց Եւա՝ մոգիչ շեշտով մը:

Թեթեւ սարսուռ մը անցաւ նախամարդուն երակներուն մէջէն: Եւայի ձայնը աւելի քաղցր, աւելի մաքուր երեւցաւ իրեն բան սոխակինը, որուն կը սիրէր շատ անգամ ունկնդրել:

—Եկուր, ինծի հետ, ըսաւ կինը:

Եւ Ադամը առաջնորդեց պարտէզին մէջտեղ գտնուող ծառի մը: Ադամ գեղնեցաւ: Գիտութեան ծառն էր ան: Եւա կը նայէր Ադամին վրայ բաղքով ժպտալով մը, և իր վարդագոյն մատներն ալ ծառը կը ցուցնէին:

Նոյն վայրկենին, կնկան ոտքերուն տակ պառկող օձը, «կեր զայն» բառերը փսփսաց, եւ գրախտին բոլոր թռչունները կը թռչէին երգելու աւելի քաղցր, աւելի երջանիկ բան երբէք:

Ադամ չմտնեցաւ, բանդի յիշեց Աստուծոյ սպանալիքը: —«Եթէ այն ծառէն ուտես, պիտի մեռնիս»:

Սակայն Եւա իր պայծառ աչքերովը կը նայէր Ադամին, որ կը զգար թէ հեշտին տաքութիւն մը կը շրջապատէ իր անգամները, և անծանօթ փափաք մը կարծնայ սրտին մէջ: Եւա փրցուց խնձոր մը և Ադամին մատուց:

Անգամ մըն ալ օձը «կեր զայն» փսփսաց, եւ դրախտին բոլոր թռչունները օդը կը թնդացնէին իրենց անուշ երգերովը: Ամէն թռչուն, ամէն ծառ, ամէն խոտ, ճերմակար թէ կը փսփսար Ադամին ականջին «կեր զայն»: Եւա կեցած էր, խնձորը բսնած ձեռքին մէջ, ժպտելով քաղցրութեամբ և թովջութեամբ: Ադամին կամքը կը տկարանար՝ կը զգար թէ թոյլ վարանումի մը տեղի կուտար:

—Արգիլուած է, միջնեց լացխռնելով:

—Էլիմարութիւն, գոչեց Եւա, ամէն լաւ բան թողատրուած է:

Եւ Ադամի արգիլել կարենալէն առաջ, Եւա խածաւ եւ գլխու գեղեցիկ շարժումով մը ըսաւ:

—Աստուած իմ, ո՞րչափ անուշ է, կեր զայն:

—Արգիլեալ է, կրկնեց Ադամ:

—Ի՞նչ յիմարութիւն, ես կերայ և բան մը չը պատահեցաւ, ինչո՞ւ չես ընկր ինչ որ ես կրնամ:

—«Եթէ այն ծառէն ուտես, պիտի մեռնիս»:

Այս խօսքին վրայ Եւա զաղբեցաւ ժպտելէ: Կուսկի պէս կարմրեցաւ եւ իր աչքերը փայլակի նման շողալ սկսան բարկութենէն:

—Եւ դուն այս բանը ինծի կըսես պտուղը ուտելէս ետքը, պօ՞ռաց: Ա՛հ, կը հասկնամ հիմա թէ ինչո՞ւ չճաշակեցիր զայն, ես կը կոահեմ բու գաղտնի յոյսդ: Կո՛ւղէիր որ ես մեռնիմ, որպէս զի դուն կարենաս ուրիշ կնկան մը հետ ամուսնանալ:

Իր նախանձու կատաղութեանը մէջ, յարձակում մը կեղծեց Ադամին վրայ, եղունգներով զինուած իր պզտիկ մատներովը: Բայց իր բարկութեանը մէջ իսկ գեղեցիկ էր: Ծագերը կը տատանէին օդին մէջ, իր գեղեցիկ աչքերը կը կայծկլտային, իր երեսները կը կարմրէին բարկութենէն, իր նուրբ շրթներն ալ կարծես կարիւնոտէին:

Այնչափ գեղեցիկ էր որ, Ադամ ալ Եւա չէր կրնար դիմադրել: Ինքն ալ խածաւ խնձորը:

Թարգմ. Տ. Լ.

—o—

111 ՏԱՐԵԿԱՆ

—Կ. Պոլսոյ էյուլպ թաղը՝ Սարգիս անունով մարդու մը այգիին մէջ կը բնակէ եղբր Արմըտանցի Վահան, որ այժմ՝ հարիւր տասներմէկ տարեկան է և 30-35 տարեկան մաքուր մը պէս առողջ է ու կաշխատի, միշտ ուրախ զուարթ ու խնդումերես է և իր յիշատակները կը պատմէ եղբր խնդալով: Երկրորդ անգամ ելած աղաւանի ունի, որոնցմով ընկույզ ու կաղին կը կոտրէ: Այս մարդը երկու անգամ ամուսնացած ըլլալով, քսանը հինգ թուան ու թուան հիւ տէր է եղբր: Ոմէն օր էյուլպէն կաթ կ'առնէ ու մինչև խառնուլ տանելով կը ծախ: Եղբր:

ՎԻՃԱԿԱԽԱՂ

Բարիգաբնակ աղնիւ բարեկամ մը մեզ շրկած է
հետեւեալ սիրուն ու սրամիտ երկտողիկներն ու բառ-
եակները, զոր հաճութեամբ կ'արտատպենք, բայց գիտ-
նալով որ մեր յարգելի ընթերցող և ընթերցողհիբ ալ
գոհ պիտի մնան անկէ, մանաւանդ վիճակի օրը (յառա-
ջիկայ հինգշաբթի) զանոնք գործածողները:

Ա.

Շուշան ճակատ, սիրտ դալար,
Մի՛ լացուներ եւ մի՛ լար:

Շատերուն երազն, իղձն է ճշմարիտ
Ոստրէի մը ծոցն ըլլալ մարգարիտ,
Որ օր մը թերեւ, յոյս, փափա՛գ յիմար,
Մատանի շինուին ձեր մատին համար:

Մայիսն ունի վարդ սոխակ, իր զարդերը
գարունի,
Ձեր կեանքն իր Մայիսին մէջ, վարդ ու սո-
խակ, սիրտն ունի:

Ձեր շնորհքը տեսնողները ըզձեզ կոչեն
մանուշակ,
Իսկ այլք՝ սոխակ, երբ լսեն ձեր ձայնին շեշտն
անուշակ:

— Ո՛հ, սակայն, ո՛չ, դուք նման չէք ծաղ-
կին ու թռչունին,
Ձի երկուքն ալ ձեր աչքերն ու շրթունք-
ները չունին:

Այս կենաց հովտին մէջ թռչնիկ նորեկ,
Ձայնիկդ երգէ՛ թող, մի՛շտ գիշեր ցորեկ:

Բ.

Անմիտ, անիմաստ Տիրացու Դաւիթ,
Սարդք ոտայն հիւսեն խելքիդ ի գաւիթ:

Կըսեն թէ Գանէն մինչև Քամչաթկայ,
Քեզի պէս հաւկիթ հատ մըն ալ չի կայ:

Վեր մի՛ նայիր երբ անցնիս փողոցէն,
Դաշոյն աչքերըդ սիրտեք կը խոցեն:

Մայրդ իցի՛ւ ծընէր զաւակ պատուական,
Քեզ նմաններ, միշտ, չորս, հինգ վեցական:

Կըսեն թէ խելքիդ լայնեղբ ի պտուկ
Շատեր բռնայանգ կը գրեն... նըստուկ:

Հերիք հանեցիր անհարկի ազմուկ,
Լռէ՛, քեզ ապուխտ չիկայ հոս, սե՛ւ մուկ:

Կ'ըսեն թէ նիսէն մինչև Սինկաբուր,
Ձիկայ ըեզ պէս հատ մ'ալ մարդ պաղապուր:

Կընտնտոցն ըլլալ սրտիդ քնարին
է շատ մ'հէգ կանանց փղձն անհնարին:

Դու ի՞նչ ես, — կ'ուզե՞ս որ ըսեմ շխտակ,
Մարդ չես, ո՛չ, հապա անճակ հրեշտակ:

Պառաւ կանանց մէջ ի՞նչ կատուածներ կան,
Որք ա՛լսը քաշեն քեզի պէս էրկան:

Կ'առնես լուրջ մարդու ձեւերը վըսեմ,
Մի՛ բարկանար երբ շոշորդ ես ըսեմ:

Երբ այլք խօսին դէմքէդ հեղիկ և քաղցր իրաւ,
Փըչէ հարաւ,
Ձիւն և ձըմեռ, ցուրտ ու սարսուռ, երբ դու խօսիս
Փըչէ հիւսիս:

Ձքնաղ արարած, ջինջ հոգւոյդ խուրպան,
Կր'ա՞ս ինձ ցոյց տալ սրտիկիդ ճամբան:

Խաբուելով դիրքէդ, անձէդ շողջողուն,
Վա՛յ քեզի կնիկ ըլլողին գըլխուն:

Տե՛ս սա բադն որ կակաղէ,
Ինքն իր կարծեօք է... բազէ:

Կեանքիս երազն, իղձն ահա՛ բովանդակ
Սիրոյդ, տատրակիկ, սիրտս ընել վանդակ:

Իրա՛ն հաւտացիր, պարոն այլանդակ:

Արծի՛ւ, դո՛ւ,—Ողջոյն, փետրաթափ աքլոր,
Որմէ կը սոսկան հաւերը բոլոր . . .

Ճերմակ, ձիւնափառ—միտն անհամ կարապ,
Տեսքով խաբուսիկ—գլուխը պարապ:

Ոչ փետուր ունիս, ոչ ալ թռչնոյ թեւ
Բայց, զարմա՛նք, ինչո՞ւ ես այդքան թեթեւ:

Գ.

Շարժ ու ձեւերդ են՝ զարդացեալ մարդու
Դեղձի նմանող—Սալոր մ'ես թթու:

Մէջ այս հիւրընկալ, մտերմին տան հոս,
Ի՛նչ բան ունիս դու, գեղնած Մայտանոս:

Թող ճակտէդ չանցնի բարկութեան պաղ ամբ,
Երբ ըսեմ թէ դու քաղցր ես զերդ Կաղամբ:

Ձմեռուան ցուրտ ձիւնն ու փըշոյ քամին,
Ձըլլա՛յ վընասեն քեզ պէս . . . Շողգամին:

Փունջ մ'երևնալու ըղձիդ, տաքնապիդ
Ո՛վ կը հաւատայ, թոռմած Կառնապիդ:

Տղմին ու ձիւնին տակէն թաթալուչ
Բաշով ես եկեր, գըռեհիկ Հավուճ:

Ամէն մէկ քայլիդ սիգալով կանգ ա՛ռ,
Պատիւ մ'է քեզի կ'չուրիւրդ . . . Կանկառ:

Հովեր մի՛ առնե՛ր փափկանազ և նուրբ
Կը ճանչնանք զքեզ, ո՛վ պայլի՛րի թուրբ:

Հեշտաբոյր ծաղկանց դու անհաշտ ոսոխ,
Խոհանոց գնա՛, շուտով, կըծո՛ւ Սոխ:

Մի՛ խանդարեր մեր հաճոյքն անպղտոր,
Հոտովդ անախորժ ու խիստ, ո՛վ սխտոր:

Քեզի «Փաթիլճան» ըսել, ոչ, անշուշտ չէ
Ներելի,

Զի Փաթիլճանն համով է քենէ շատ, շատ
աւելի:

Գ. Ա.



Թատրերգութեան հեղինակ մը Բարիլի Կէ-
թէի թատրոնի տնօրէնին ներկայութեանը կը
կարդայ իր մէկ գործը որ կ'ը մերժուի. ներկա-
յացուելու:

—Արդէն այսպիսի գործ մը դատելու անկա-
րող էք, կը գոչէ յուսահատ հեղինակը բարկու-
թեամբ:

—Ի՛նչպէս, կը հարցնէ տնօրէնը:

—Որովհետեւ կարգացած ժամանակս մինչեւ
վերջը քնացաք:

—Բայց սիրելի պարոն, պէտք է գիտնաք
որ գրագիտութեան մէջ քնանալն ալ կարծիք
յայտնել ըսել է:

Հայրիկ, վաղը ինծի էքօնօմի բօլիթիք մը
առնես պիտի:

—Ի՛նչ բան է ատիկա:

—Դիրք է, հայր իմ, իտարէ ընելուն ճամ-
բան կը սորվեցնէ:

—Ատանկ բան չուզեր, առուտուրին պօլ ե-
կզած ատենը ըլլար նէ՛ ինչ է նէ, հիմա այն
աստիճան քէսատութիւն մը կայ որ, մարդ ուզէ
չուզէ ինքնիրենը իտարէ կը սորվի կոր: Հէմ, դուն
կ'ուզես նէ վարժապետդ ինծի զրկէ, անօթու-
թենէ մեռնելուն ճամբան ես իրեն սորվեցնեմ:

ԱԶԱՀԱՄԲՈՅՐ

Տէրտէրի կամ վարդապետի համար չէ մեր խօսքը, երբ աշահամբոյր բառը կը գործածենք. այլ պարզապէս . . . կնոյ մասին է. Գիտէք թէ Եւրոպայի մէջ մինչև վերջին տարիներս սովորութիւն էր — դեռ այդ սովորութիւնը կայ Ֆրանսական կարգ մը ընտանիքներու ինչպէս և Ռուսաստանի բարձր դասակարգին մէջ — որ երբ արական սեռին պատկանող անձ մը հիւրասենեակ մը մտնէր, իգական սեռին պատկանող իր ծանօթներուն ձեռքը կը պագնէր: Այդ սովորութիւնը որ մօտաւորապէս սօսը տարիներէ ի վեր անհետանալու վրայ էր, որուն տեղ Անկլո-Սաքսօն ապուշ բարեւը և Բրիտանական Շաք-Հանճը կը տիրապետէին:

Արդ, կարգ մը Բարիգուհիներ ուղելով հին և կախանիս սովորութիւնը վերականգնել — անշուշտ իրենց ձեռքերը շատ սիրուն ըլլալու են և կամ հաւանաբար մասնաւոր հաճոյք մը զգալու են զանոնք պագցնել տալով —, այս անգամ ահագին միութիւն մը կազմած են, որուն անդամուհիները պիտի ստիպեն էրիկ մարդիկը իրենց ձեռքը համբուրելու:

Իոժոժիկ — Ստիպելը աւելորդ է. որ երկտասարդը գեղեցիկ սեռին ձեռքը պագնելու համար փոխանը չի նետեր:

Պատժական ատենի մը կը ներկայացնեն երկայնահասակ ու սև մօրուքով յանցաւոր մը, Գաւառը վկաններուն տեղեկագիրը աչքէ տնցունելէ ետքը կըսէ յանցաւորին.

— Վկաներուն խոստովանութեանը նայելով խիղճդ ալ մօրուքիդ պէս սև ըլլալու է:

— Ներեցէք Պ. գաւառը կը պատասխանէ ամբաստանեալը. եթէ դուք խիղճը մօրուքին հետ կը համեմատէք, ուրեմն ձեր անխիղճ ըլլալը կը հաստատէք, որովհետև դուք ամենեւին մօրուք չունիք:

Ապուշին մէկը զիշեր մը թատրոն գացած ըլլալով, յաջորդ օրը դէմը ելնող բարեկամներուն կ'սկսի պարծենալ ու ըսել թէ «սանկ աչուր խաղացին, նանկ աչուր երգեցին», բայց երբ ի-

րեն հարցուցին թէ ներկայացուած խաղը ինչ էր. — Իրաւոր չգիտեմ, պատասխանեց, վասն զի ազգարարութիւնը չի կրցի ձեռք ձգել:

Նոր այրի մնացող կին մը ամուսնոյն գերեզմանին վրայ ինկած մէկ երկու ժամ լալէ ետքը աչքերը սրբելով ըսաւ — Ոհ, դարձեալ մխիթարութիւն մը ունիմ, զի ասկէ ետքը գիշերները էրկանս դուրսը ուր մնալը պիտի գիտնամ:

Ճաշարանի մէջ.

— Վարպետ, այսօրուան եփած ձուկդ երեք օր առաջ տուած ձուկիդ չափ թարմ չէ:

— Ընդհակառակը, պարոն, նոյն ձուկն է:

ԶԲՕՍԱՆՔ

ԳՈՅ ՏՕՄԻՆԱ ԽԱՂԱԼ

Երկու ընկերներ գէմ առ դէմ նստած, պիտի յաշուինք գոց ՏՕՄԻՆԱ խաղալ, այսինքն տօմինայի քարերուն վրայ երեւցած նշանները երեսի վրայ դնելով, ի մեծ զարմացումն մեզի դիտողներուն:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ըսենք թէ Ա. խաղացողը Կո եմ, և դնելիք առաջին քարս 3 և 1 (սէ եեկ) ըլլայ. այս քարին վրայի իմ աշ կողմս գալիք նշանները քանի հասն օր են՝ աշ ձեռքիս այնքան մատերով կը բռնեմ քարը, այսինքն երեք մատով. ընկերը անտարբեր երեւնալով, աչքին ծայրով մատուցնելու կը նայ, և միտքը կը պահէ 3 թիւը. իսկ քարին միւս կողմի, այն է ձախ կողմիս գալիք 1 նշանը ցուցնելու համար ձախ ձեռքիս մատը քարին վրայ կը դնեմ, անանկ մը որ դիտողները չի կռահեն:

Խաղակիցս հստկնալով որ դրած քարիս աշ կողմինը 3 ու ձախինը 1 է, հետեւաբար ինքն ալ 3 կամ 1 նշանով քար մը կը դնէ, չի մոռնալով սակայն ինձի պէս ծայրը գալիք նշաններուն թիւին համապատասխան մատներով բռ-

նել որ ես ալ հասկնամ եւ այդպէս շարունակելք խաղերնիս :

Քարին ծայրը եկող 6ի (շէշ) նշանը հասկընելու համար՝ քարը 5 մատով բռնած իր տեղը դնելէ ետքը աջ ձեռքերնիս թեթեւ ըստ զանին կը զարնենք, «մի մտմտաք բարեկամս» ըսելով : Ծայրը սպիտակ եղող քարը տակաւին չի դրած, խաղացողը թեթեւ մը կը հաղայ : Եթէ երկու ծայրերուն յարմար քար չունենանք, «չունիմ» ըսելով ուրիշ քարեր պիտի փոխենք : Զոյգ թիւերով քարերը (սիւ շէշ, սիւ պէշ եւայլ) ըստ սովորութեան երկայնքին կը դրուին :

Հետաքրքիր հանգիսականք տեսնելով որ մենք ոչ իրրորու երես կը նայինք և ոչ ալ աչքի կամ ձեռքի շարժումներով նշաններ չենք տար, ի դուր պիտի բնտենն այս խաղին գաղտնիքը, ու աւելի պիտի զարմանան երբ առաջարկենք իրենց թէ՝ «քարերը դուք խտռնեցէք որ մենք քաշենք, ասկէց զատ, դուք ընտրեցէք մեր երկուքէն առաջին քարը դնողը, որպէս զի առաջուց իրարու հետ համաձայնած էք» չըսէք :

Աւելորդ չեմ համարիր ըսել որ, երկու խաղացողներս նախապէս առանձինն լաւ փորձեր ընելու ենք, ապա թէ ոչ կէս ճամբան կը մընանք, խաղին հետ մենք ալ խաղք կըլլանք :

Զբօսասերք

ՏԵՄԵՎԻՔ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ :

Քաֆէ Բիկօլէթթօ

Ծեծով կրթուած պարուն մը կարծելով թէ խօսակիցն ալ իրեն պէս ծեծով կը հասկնայ, յանդգնեցաւ ձեռք վերցնել անոր վրայ, բայց անոր կրտսեր՝ 13 տարեկան եղբօրը կողմէ մէկին դէմ երկուք մարտելով, բերանը սրբեց քալիուն ձգեց :

Կալաթա

Հոյեղի լրատարներուն (?) սիրտերը շահելու համար Մալիւմ աղային կողմէ խոստացուած զիջաւէթը տրուեցաւ : Բայց ուտել խմելէ ետքը քիսօի համար մէջերնին խշռ հանելով, նորէն գետուեցան, որով Մալիւմ աղան զիյաֆէթը վերայ տուած եղաւ :

Հաճի Բանաքօ

Կիրակի գիշեր քաղաքապետական պարտէզէն օրիորդի մը շարժուն գրպանը գտնուեցաւ

որուն մէջ 8 հատ սիրահարական նամակներ կային, ամենքն ալ զատ զատ անձերէ զրկուած : Կը վախցուի թէ թղթատարական վտրշութիւնը դատ կը բանայ այդ բօսքաճի օրիորդին դէմ, իր իրաւունքը կապտած ըլլալուն համար :

Պարէշ տաւր սեղան :

Ամուսնանալ ու զոյգ երիտասարդի մը առաջարկուեցաւ նախապէս ինքզինքը բժշկական քննութեան մը ենթարկել, բայց պարոնը չշաբաթ մը գիշեր ցորեկ մտածելէ ետքը չկրցաւ գոհացուցիչ պատասխան մը տալ, անոր պատճառը իրեն վերապահելով : Ասոր ի պատասխան խըշախտ խաթունն ալ ըսաւ. — Անանկ է նէ օղլու՛մ, այդ պատճառը մինակ քու վրադ պահէ ու տեղդ ճիշդիկ ըրէ :

Հաճի Բանաքօ

Ներկայ ամրան եղանակին մէջ քաղաքիս հասարակութիւնը բաւական հարուստ է... թատրոնի կողմէ : Առ այժմ ունինք զործոն վեց՝ և պահեստի երեք խումբեր, որոց պատկառելի ցանկն է հետեւեալը :

1. Պուլկարական, տրամաթիքական, ալաքէյֆինէական և հազըրեյիճիական :

2. Հայկական, թուրքադարձական, քանթալական, ալիովքի հանգերձ :

3. Մնչկատական, գօմէտիական, քանթօյական, պալէթական, վէշայրիհիւմ վէշայրիհիւմ :

4. Յունական, թրանսփալական, ժիմնասթիքական, զինճիք գրանական, Էայլն, Էայլն :

5. Իտալական, տէլլա սինեօռէ էսկիմարգավիտական, տէլլա սինեօռա թուրքանտա մանթարաքանական, օբէրաբիւֆական, էցէդրա էցէդրա :

6. Գարակէօղ-հաճի էյվաթական, անդրէսի՝ իւշ օնլուգ գահվէօրնէ պէտէլական :

Պահեստի խումբեր. — Սարկապուրկայտական, Տէօքիւնթիական և Զօլուխօճուխական, որոնք առ ի չգոյն թատրոնի կամ շատրոնի առ այժմ ստիպուած են թուրքերին կըլլելով սպասել :

Տէրը կարողութիւն տալ ժողովուրդին որ թատրոնի մը պարունակելիք հանգիսականներու թիւէն ալ աւելի եղող այս բոլոր խումբերուն անձինքը այս ամառ ալ ուրախացնէ :

Զբօսաշրջիկ

Թասրուն Պորիս — Վէսէլօ թատերախումբը այս գիշեր պիտի ներկայացնէ «Յեղափոխական Ռօպէրթօ» թատերախաղ 4 արար և Թունալից Սրուակը, Զաւեշտ 3 արար, Պարերգ :

Վաղը գիշեր «Խղճի խայթը» բարոյախաղ 4 արար և խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն :

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլտիւրիւնի ֆորալար վէ շիքեայէր . Մալիւմ .
Թը ֆէննիյէ . Լուլաթը Լէթայիֆ . ֆէննի էյլէնճէ-
էր վէ Բէսիմի Պիլմէճէր :

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ , բէյտէրբէյ
նէշր օլունան մէզբիւր քիթապըն պիրինճի ճիւ-
աի խիթամ պուլուպ , իտարէխանէմիլտէ սա-
թըլմտգտաւըր ֆիյ 2 ֆրանք :

— 0 —

ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵԼԻ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետումս ,
հասցէտումս , նամակագրուի , հարսանեկան հրա-
ւիրագիր , մահալդ , թատերական ազգեր , տոմ-
սակներ , գիրք և յայտարարութիւններ :

Գիները յոյժ գիւրամատչելի :

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարու-
թիւնները ճշգուծեամբ և փութով կը կատար-
ուին :

Այցետումս տպագրել տուողներուն նուէր կը
տրուի «Ինպէս գործածելու է այցաքարտը» ա-
նուն հրահանգի գրքոյկ մը :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թէև Տպարիշը Պուլկարիոյ պզտիկ քաղաք-
ներէն մէկն է , ուր նկարչութեամբ և լուսանը-
կարչութեամբ կը պարսպիմ . ու թէև գտնուած
միջավայրս շատ յարմար չէ յառաջգիւրծեան
բայց միշտ աշխատած եմ արհեստիս գիտական
և արուեստական ամենավերջին կատարելագոր-
ծութեանց բայլ առ բայլ հետեիլ , որուն շնորհիւ
այսօր ունիմ արուեստին վերջին կատարելութեամբ
բը օժտուած գործիքներ որոնց հետ նաև նկարչու-
թեան արհեստիս շնորհիւ կարողեմ արտագրել
ակումսիւսմանի ամենակատարելագործեալ պատ-
կերներ , զոր մասնաւոր կերպով մշտակած եմ , և

որուն մէջ նկարչութիւնը մեծ դեր կը խաղայ .
Ասիկա փորձելը դժուար չէ , կրնաք Ձեր մէկ լու-
սանկարը զրկել իմ հասցէիս և պիտի ստանաք
մեծագիրը օրինակին ճիշդ նման , միայն 15 ֆը-
րանքի փոխարէն , այն ալ պատկերը ստանալէ
և հաւնելէ վերջը վճարելու պարտաւոր . Իսկ ա-
նոնք որ կտաի վրայ իւղաների՝ բնական գոյնե-
րով պատկերնին կուզեն ունենալ , պէտք է գա-
ղափար մը տան գոյնին նկատմամբ , (երեսի ,
աչքերու , մազերու և հագուստի գոյնը) բնական
մեծութեամբ , 35 ֆր . ի փոխարէն , վերայիշեալ
պայմաններով :

Թէև շատեր ակումսիւսման պատկերներ կը
պատրաստեն , բայց եւ կը վստահեցնեմ որ ոչ
մէկինը կրնայ այնչափ կատարելագործուած ըլ-
լալ որչափ նկարչի մը պատրաստածները . վա-
սըն զի առանց կանոնաւոր ուղղուշի՝ ոչ մէկ ակ-
ումսիւսման արժէք կրնայ ունենալ :

- Յարգանք

Ն. ՍԻՍԱԿԱՆ

Նկարիչ-Փօթօկրաֆ ՏՈՊՐԻՉ



ԾԱԽՈՒԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին :

Լուսինեան Իշխան — Փրանսահայ Բառարան
գին 25 ֆր . ոսկեգրամ . Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք :

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն
Արշակ Բ . ի և անոր Պապ որդւոյն 2 ուկէս ֆր .
Թրթուումներ (ստանաւոր) 25 սնդ .
Հովատուն " " 25 " "
Արտասուաթոր " " 20 " "

Թ. Գ. Հինուկեան — Տեսական և գործնական
Բերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր .

Շէյքբերի Համլէթը , ողբերգ . 2 50 ֆր .
Բաղդախալ պատկեր 25 սնդ .
Թապալքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ .
Բարեկենդանի անկուտիները , կատակախաղ 1
արար 50 սնդ .

Մահուպիլէթին միւքեափաթը , գօմէտի պիր
բէրտէ , 50 սնդ .

Գողանձ գօճա եախօտ Էնֆիլէճի , գօմէտի պիր
բէրտէ , 50 սնդ .